

**ՀՀ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ ՖԻԼԻՊԻ

**ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

**ԺԳ.00.02. «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝
գիտությունների

Մանկավարժական
դոկտոր, պրոֆեսոր **Գ.Պ.**

Հովակիմյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
գիտությունների

Մանկավարժական
դոկտոր, պրոֆեսոր **Լ.Ս.**

Ներսիսյան

գիտությունների

Մանկավարժական
թեկնածու, դոցենտ **Մ.Գ.**

Գևորգյան

Առաջատար կազմակերպություն՝
անվան

Գյումրու Մ.Նալբանդյանի

մանկավարժական

պետական

ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. ապրիլի 28-ին՝
Ժամը 12 - ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020
մասնագիտական
խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 20016թ. մարտի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝
Սվաջյան

Ա.Հ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտի քաղաքականությունը իրականացվում է՝ ելնելով արդի փուլում միջազգային կրթական գործընթացներից: Համաշխարհային գործընթացների ազդեցությունների, բարեփոխումների շարունակականությունը վերաժվելով ազդեցիկ գործոնի, նոր մոտեցումներ է պահանջում նաև ՀՀ-ում գործող թանգարաններից՝ որպես սոցիալ-մշակութային գործունեության համակարգի հանրային կառույցի՝ նորովի արժևորելով թանգարանի կրթամշակութային գործառույթը:

Թանգարան-այցելու փոխհարաբերությունը պահանջում է կրթություն թանգարանի մշակութային տարածքում, որի շնորհիվ շրջանառվում է «կրթամշակութային գործունեություն» եզրույթը: Այս խնդրի տեսական և մեթոդական հենքը թանգարանային մանկավարժությունն է, որի հիմնական գործառություններից է հանրության բոլոր շերտերի համար իրականացվող այլընտրանքային հարատև կրթության կազմակերպումը, ինչը մեր հանրապետությունում շատ հեռու է բավարար համարվելուց:

Հաշվի առնելով, որ կրթական գործունեությունը ժամանակակից թանգարանային գործում պետք է դառնա առաջնային, ուստի անհրաժեշտ է մշակել թանգարանի՝ որպես սոցիալ-մշակութային ինստիտուտի, նոր հայեցակարգ: Այն պետք է հիմնվի թանգարանի կրթական գործառույթի սոցիալական նշանակության հիմնավորման վրա:

Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգի ներկայիս բարեփոխումները միտված են ինտեգրվելու միջազգային կրթական դաշտին, ապահովելու ուսուցման որակն ու բարձրացնելու արդյունավետությունը, որտեղ իր ուրույն տեղն ու դերն ունի նաև թանգարանը՝ ի սկզբանե հնարավորություն ունենալով վերացնելու դասագործընթացի տարածքային և ժամանակային սահմանափակումները: Ցավոք, պետք է արձանագրենք, որ այդ հնարավորությունները նույնպես չեն իրացվում:

Թեև տեղեկատվական հոսքերի ծավալի և հանրակրթության համակարգի դասագործընթացի ժամանակային և տարածքային հնարավորությունների միջև բազմաթիվ հակասություններ կան, դրանց լուծման ուղիներից մեկը թանգարանային մանկավարժության գործուն մեթոդներն ու միջոցներն են, որոնք անձի ուսուցմանը ապահովում են բազմաբովանդակ, արդյունավետ ծավալ և իրականացման բազմաշերտ ու մատչելի ուղի:

Մեր նախնական հետազոտությունները ցույց տվեցին թանգարանային մանկավարժության գիտակիրառական հիմունքների մշակման անհրաժեշտությունը, կրթամշակութային ծրագրերի իրականացման գործում, նոր մոտեցումների ցուցաբերում ազգաբնակչության տարբեր շերտերի՝ հատկապես դպրոցականների, ուսանող երիտասարդության, կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների, սոցիալական այլ թիրախային խմբերի համար, ինչը նախկինում բավարար հիմքերի վրա չէր:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է թանգարանային մանկավարժության համակարգի գիտակիրառական հիմունքների և կրթական ծրագրերի արդի պահանջներին համակցմամբ, ինչը հնարավոր է միայն զարգացման օրինաչափությունների վերլուծությունների, գիտատեսական և գործնական հետազոտությունների հիմնավորմամբ:

Հիմնախնդրի արդիականությունը, նրա կրթամշակութային նշանակությունը, տեսական մշակվածության անբավարարությունը և գործնական պահանջը որոշակիացրեցին մեր թեմայի ընտրությունը. «Թանգարանային կրթական

ծրագրերի իրականացման հիմնախնդիրը» (Հայաստանի թանգարանների օրինակով):

Հետազոտության նպատակն է մշակել թանգարանային մանկավարժության համակարգի գիտակիրառական հիմունքներ և դրանք գործնականում իրականացնել Հայաստանի Հանրապետության թանգարաններում:

Հետազոտության օբյեկտը թանգարանների կրթամշակութային գործունեությունն է:

Հետազոտության առարկան թանգարանային մանկավարժության զարգացման տարբեր հայեցակարգերի ներդրման գործընթացն է:

Հետազոտության հիմքում ընկած է հետևյալ վարկածը: Թանգարանային մանկավարժության համակարգում կրթական ծրագրերի իրականացումը, զարգացումն ու արդյունավետությունն ապահովված կլինի, եթե՝

- գործընթացը դիտարկվի հասարակության սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային միջավայրի համատեքստում՝ հաշվի առնելով անձի ազգային առանձնահատկություններն ու մշակութային ժառանգությունը, միջմշակութային կապերն ու տարածաշրջանային ազդեցությունների առանձնահատկությունները,
- զարգացվեն և համակարգվեն թանգարանային միջավայրում ընթացող կրթադաստիարակչական գործունեության հիմունքները,
- նախագծված-պլանավորած կրթադաստիարակչական գործունեության մոդելի կառուցվածքային բաղադրիչները կատարեն վարչակառավարչական, տեղեկատվական, կազմակերպչական և վերլուծական գործառույթներ,
- համակարգի կառավարումը կառուցվի գիտատեսական և կիրառական հիմքերի վրա, որոնք ապահովեն գործընթացի բոլոր բաղադրիչների համալիր զարգացումն ու միասնականությունը, այդ թվում նաև հուզաարտահայտչական և գեղագիտական ոլորտը:
- ապահովվեն ուսումնադաստիարակչական լրացուցիչ մանկավարժական պայմաններ՝ ստեղծագործական-կրթական միջավայր, կենսունակ դարձնելով թանգարանային մանկավարժության գործունեությունը:

Հետազոտության նպատակի և գիտական վարկածի համաձայն առաջադրված խնդիրներն են.

- Իրականացնել թանգարանի կրթադաստիարակչական համակարգի կատարելագործման և զարգացման արդի միտումների գիտատեսական վերլուծություն:
- Բացահայտել և հիմնավորել, թանգարանային պատմամանկավարժական հայեցակարգային մոտեցումների կիրառելիության աստիճանը Հայաստանի Հանրապետությունում:
- Որոշել աշխատանքային առանձին ուղղությունների և մոդելների կիրառման հնարավորությունները և արդյունավետությունը թանգարանային մանկավարժության կրթադաստիարակչական գործընթացում:
- Բացահայտել կրթադաստիարակչական գործընթացի գեղագիտական-ստեղծագործական, բարոյագիտական, ռազմահայրենասիրական, քաղաքացիական, ազգային ինքնագիտակցության համալիր մոտեցման առանձնահատկությունները:
- Ելնելով անցումային շրջանի պահանջներից և հնարավորություններից, վեր հանել և մշակել թանգարանային կրթական ծրագրերի իրականացման կառուցվածքային սկզբունքները, կառավարման առանձնահատկություններն ու պայմանները:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝

- աճող սերնդի սոցիալականացման գործընթացում կրթության առաջատար դերի մասին սոցիալ-մանկավարժական գաղափարները, հանրության բոլոր շերտերի համար իրականացվող այլընտրանքային հարատև կրթության կազմակերպումը (Լ.Ա. Բարսեղյան, Կ.Գ. Ղաֆադարյան, Հ. Պիկիչյան, Ա. Սիմոնյան, Ա.Գ. Բոյկո, Ֆ. Վերպլանկե, Մ.Ս. Կազան, Ի.Ա. Կոլեսնիկովա, Օ.Լ. Նեկրասովա-Կարատենա, Բ.Ա. Ստոյարով, Մ.Յու. Յուլիանկիչ),
- հասարակության օբյեկտիվ զարգացման փիլիսոփայական դրույթները, մանկավարժների, հոգեբանների, սոցիալ-մշակութային ոլորտի մասնագետների տեսական եզրահանգումները, հայ և արտասահմանյան հեղինակների հայեցակարգային դրույթներն ու իրականացված ուսումնական ծրագրերը (Լ.Գ. Վանեսյան, Գ.Պ. Հովակիմյան, Մ.Գ. Գևորգյան, Ա.Վ. Բակուշինսկի, Ն.Յու. Ժվիտիաշվիլի, Ա.Մ. Ռազգոն, Ռ. Ուլյամս, Ն.Ֆ. Ֆեդորով, Լ.Մ. Շյախտինա, Մ. Յու. Յուլիանկիչ, Ն.Ա. Յակովլևա):

- անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման օբյեկտիվ միտումների փիլիսոփայական դրույթները:

Հետազոտության մեթոդները: Նշված խնդիրների լուծման և առաջադիր վարկածի հիմնական դրույթների ստուգման համար օգտագործվել է հետազոտության պատմահամեմատական, ընդհանուր գիտական և մանկավարժական հետևյալ մեթոդների ամբողջությունը՝

- հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժական, հոգեբանական գրականության և հետազոտությունների, արխիվային փաստաթղթերի, գրական աղբյուրների ուսումնասիրում, ընդհանրացում և վերլուծություն,
- կառուցվածքային, գործառույթային, վիճակագրական և մաթեմատիկական վերլուծություն,
- մանկավարժական դիտումներ, զրույցներ և հարցումներ,
- փորձարարական ուսուցում:

Հետազոտության արդյունքների գնահատման համար կիրառվել է փորձաքննական գնահատման, հարցաթերթիկների, գրավոր աշխատանքների արդյունքների վերլուծության մեթոդները:

Ստացված արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունն ապահովված են սոցիալ-մշակութային ոլորտի՝ մասնավորապես թանգարանային մանկավարժության արդի նվաճումների և մշակված հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, փորձարարական աշխատանքների համակարգված և տևական բնույթով, հետազոտական խնդիրների իրականացմանն ուղղված շարունակականությամբ և մանկավարժական ուսումնասիրմամբ, վերլուծությունների համադրմամբ, եզրահանգումներով, ատենախոսի աշխատանքային ներդրումներով:

Հետազոտության իրականացման փուլերը.

Տեսական և գործնական հետազոտությունները կատարվել են 2005-2015թթ. երեք փուլերով.

- առաջին՝ նախապատրաստական փուլը (2005-2008թթ.) ներառել է թանգարանային համակարգի կառավարման, գիտակրթական ծրագրերի, և հետազոտության հիմնախնդիրների վերաբերյալ թանգարանագիտության, փիլիսոփայական, մանկավարժական, հոգեբանական, սոցիալ-մշակութային գործունեության գրականության տեսական վերլուծությունը, անցկացվել է փորձարարական աշխատանքներ, մշտադիտարկում, մշակվել են հիմնախնդրի լուծման

ընդհանուր մոտեցումները, որոնք թույլ են տվել դիտարկել թանգարանային կրթական ծրագրերի իրականացման հնարավորությունները, հիմնավորել հետազոտության թեման և վարկածը:

- Երկրորդ փուլը (2009-2012թթ.) ընդգրկել է թանգարանային մանկավարժության գործընթացում գործառնության հիմնական ուղղությունները: Մշակվել և տեսականորեն համակարգվել են թանգարանային կրթական ծրագրերի իրականացման հետազոտական-փորձարարական աշխատանքները, որից հետո իրականացվել են փորձարարական աշխատանքներ՝ առաջադիր աշխատանքային վարկածը ստուգելու համար:
- Երրորդ՝ ընդհանրացնող փուլում (2013-2015թթ.) կատարվել է հետազոտության փորձարարական նյութի համակարգում, վերլուծում և ընդհանրացում, հետազոտական տեսական մեթոդաբանական հիմքի ճշգրտում, ստացված արդյունքների վերլուծություն և գնահատում, մշակված դրույթների ներդրման արդյունքներով առաջարկությունների ներկայացում, եզրակացությունների և ատենախոսական հետազոտությունների ձևակերպում:

Հետազոտության գիտական նորույթը:

- Հայաստանի Հանրապետության թանգարանային մանկավարժության ոլորտում առաջին անգամ մշակվել են թանգարանային կրթական ծրագրերի նախագծման ու կառուցման գիտատեսական հիմունքները, որտեղ որոշված է կառուցվածքը, կառավարման գործընթացի գործառույթների կազմը, յուրաքանչյուր փուլի խնդիրներն ու մեթոդները, արդյունքների գնահատման սկզբունքները:
- Մշակվել և հիմնավորվել են տեսական դրույթներ և ընդհանրացումներ թանգարանային կրթական ծրագրերի իրականացման մեթոդաբանական հիմունքների և կառուցվածքային սկզբունքների վերաբերյալ:
- Վերլուծվել է թանգարանային մանկավարժության արտերկրներում ձևավորված գործունեության միջոցների ու մեթոդների ազդեցությունը ՀՀ թանգարանների կրթամշակութային գործունեության վրա:
- Սոցիալ-մշակութային գործունեության համակարգում տեղի ունեցող փոփոխությունների, զարգացման միտումների վերլուծության հիման վրա մշակվել է թանգարանային կրթական ծրագրերին ներկայացվող արդի պահանջները:

- Բացահայտվել է թանգարանային մանկավարժության բնութագիրը՝ որպես ամբողջական երևույթ, կրթամշակութային գործընթացների ժամանակակից միտումների համաձայն:

Հետազոտության տեսական նշանակությունը:

- Տեսականորեն հիմնավորվել և փորձարարական աշխատանքներով հաստատվել են թանգարանային մանկավարժության՝ որպես համակարգի, կառավարման գիտատեսական և մեթոդաբանական հիմունքները:
- Փորձարարական աշխատանքներով հաստատվել է թանգարանային մանկավարժության համակարգային կառավարման անհրաժեշտությունը, մշակվել է այդ գործընթացի տեխնոլոգիական ապահովման հիմունքները, որոնք արտացոլված են ատենախոսի հեղինակային ծրագրերում, մենագրություններում, թանգարանային մանկավարժությանը նվիրված աշխատություններում:
- Թանգարանային մանկավարժության տեսանկյունից բացահայտվել և հիմնավորվել են տարիքային բոլոր խմբերի համար կրթական ծրագրերի մատչելիությունը և մասսայականացման նպատակահարմարությունը:

Հետազոտության գործնական նշանակությունը:

Աշխատանքն ունի գիտամանկավարժական գործնական նշանակություն թանգարանային միջավայրում կրթամշակութային գործունեություն կազմակերպելու և թանգարանային մշակույթի մակարդակը բարձրացնելու համար: Ստեղծվել են (համահեղինակությամբ) «Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ», «Կրթությունը թանգարանում», «Էքսկուրսավարության հիմունքներ» ուսումնական ձեռնարկները, մշակվել են մասնագիտական բարձրագույն կրթության ուսումնական ծրագրեր:

Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել դասագրքերի և մենագրությունների ստեղծման, ինչպես նաև թանգարանային մանկավարժության կրթամշակութային գործունեության իրականացման գործընթացում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

- Թանգարանի կրթադաստիարակչական համակարգի էական բնութագիրը:
- Թանգարանի կրթադաստիարակչական համակարգի բարեփոխումները, որոնք միտված են կառուցվածքային փոփոխությունների և բովանդակային նորացման:

- Թանգարանային մանկավարժության համակարգի կառավարումը, որը ներառում է ՀՀ կառավարության, «Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի», «Թանգարանների համաաշխարհային կոմիտեի», ՅՈՒՆԵՍԿՕ/ԻՎՕՄ-ի Հայաստանի ազգային կոմիտեի, Եվրոպական միության, Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի (dvv-international), «Ազգային զարգացման գիտակրթական կենտրոնի», «Թանգարանային կրթության կենտրոնի» փոխգործակցությունը, որը ենթադրում է թանգարանային կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում ազգաբնակչության, մասնավորապես աճող սերնդի համակողմանի զարգացման նպատակով:
- Թանգարանային կրթական ծրագրեր, որոնք ապահովում են իրականացվող կրթական և սոցիալ-մշակութային բարեփոխումներ, թանգարանային ոլորտի կադրերի պատրաստում ու վերապատրաստում:
- Թանգարանային կրթական ծրագրերի իրականացման գործընթացում հոգեբանամանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը զուգակցվում է թանգարանային միջավայրի ազդեցության հետ:

Հետազոտության արդյունքների, եզրակացությունների և առաջարկությունների հիմնավորվածությունն ու հավաստիությունը ապահովված է աշխատանքի մեթոդաբանությամբ, իրականացված գործընթացի արդյունքներով, հետազոտության մեթոդաբանական հիմքերի, մեթոդների, վարկածի, նպատակի, առաջադրված խնդիրների հիմնավորվածությամբ, հետազոտության տրամաբանական կառուցվածքով, մանկավարժական փորձարարական աշխատանքների տևական բնույթով, վերլուծության արդյունքներով, ատենախոսության հիմնական դրույթների՝ շարունակական կրթության նկատմամբ պետության, հասարակության պահանջների և անձի պահանջմունքների համապատասխանությամբ:

Հետազոտության փորձաքննությունը:

Հետազոտության փորձաքննությունն իրականացվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Տնտեսագիտության և կառավարման ամբիոնում, Կուլտուրայի ֆակուլտետի Գրադարանագիտության, մատենագիտության և թանգարանագիտության, Մանկավարժության տեսության ու պատմության ամբիոններում: Հետազոտության տեսական դրույթները քննարկվել են միջազգային համաժողովներում, սեմինարներում արժանանալով դրական

գնահատականի: Հետազոտության արդյունքները ամփոփված են ուսումնական ծրագրերում, հոդվածներում, երկու ուսումնական ձեռնարկներում:

Հետազոտության ներդրումը:

Փորձարարական աշխատանքների և հետազոտության արդյունքների ներդրման համար բազա են հանդիսացել Հայաստանի Հանրապետության մի շարք թանգարաններ՝ հենակետ ընդունելով Հայաստանի Ազգային Պատկերասրահը, Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանը, Երևանի Հ. Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի մանկական ստեղծագործության թանգարանը, Ավ. Իսահակյանի տուն-թանգարանը, Ա. Խաչատրյանի տուն-թանգարանը, ԳԱԹ-ի մասնաճյուղ Դ. Դեմիրճյանի տուն-թանգարանը, ԵՊՀ պատմության թանգարանը, Երևան քաղաքի պատմության թանգարանը, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը, «Կալենց» թանգարանը, Հայաստանի բնության պետական թանգարանը, Հ. Թումանյանի թանգարանը, Մ. Սարյանի տուն-թանգարանը, Ս. Փարաջանովի թանգարանը, Գյումրու Հ. Շիրազի հուշատուն-թանգարանը, Ասլամազյան քույրերի թանգարանը, Մ. Մկրտչյանի և Ս. Մերկուրովի տուն-թանգարանները, Վանաձորի կերպարվեստի թանգարանը, պատկերասրահը, Ս. Զորյանի տուն-թանգարանը, Աշտարակի Պ. Պողոջյանի տուն-թանգարանը, Հ. Թումանյանի տուն-թանգարանը Դսեղում, Արցախի պատմագիտական թանգարանը, ինչպես նաև ՀՊՄՀ-ի պատմության թանգարանը և կուլտուրայի ֆակուլտետի «Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն» բաժինը:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 165 համակարգչային էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության՝ **«Թանգարանային մանկավարժությունը որպես սոցիալ-մշակութային գործընթաց»** խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ **«Թանգարանի կրթամշակութային գործունեության ձևավորման պատմական նախադրյալները»** ենթագլխում ներկայացվում են «Թանգարան» հասկացության կրթամշակութային գործառույթը և զարգացման խնդիրները պատմական տարբեր ժամանակահատվածներում:

Նշվում է մասնագիտացված թանգարանների գործունեության մասին, որոնք հատուկ կրթական ծրագրեր սկսեցին իրականացնել դեռևս 19-րդ դարի կեսերից: Ներկայացված է նաև 17-18-րդ դարերում համալսարանական թանգարաններն ու նրանց իրականացրած գիտակրթական գործունեությունը:

Դիտարկված և համեմատական վերլուծության է ենթարկված Հայաստանում XX դարի սկզբներին մանկավարժական թանգարան ստեղծելու գործընթացն ու այդ գաղափարով տոգորված հայ առաջավոր մտավորականների գործունեությունը:

Հիմնախնդրի համատեքստում ներկայացված է մանկական թանգարանների նկատմամբ հասարակական հետաքրքրությունը, որը պայմանավորված է կրթական համակարգում ճգնաժամային երևույթների առկայությամբ, կրթության ոլորտում ավանդական ձևերի և մեթոդների նորացման ուղիների փնտրտուքով, թանգարանային մանկավարժության սկզբունքների, հասկացությունների, կատեգորիաների տիրապետման առումով:

Թանգարանները դիտարկելով որպես այլընտրանքային կրթության կենտրոններ, կարծում ենք, որ դրանց հնարավորությունները անսպառ են հոգեբանամանկավարժական նոր մտահղացումների և մեթոդների գործնական կիրառման համար: Մշակելով ցուցադրության կառուցման նոր սկզբունքներ և կրթական ծրագրեր, հնարավոր է ապահովել սովորողի կամ թանգարանային տեղեկատվության այլ սպառողի մուտքը ցուցադրություն՝ որպես հարատև կրթության որոշակի տարածք: Թանգարանային մանկավարժի խնդիրն, այս դեպքում դառնում է ուսումնական գործընթացի կառավարումը:

«Թանգարանային մանկավարժության գործառնությունը ըստ հարացույցների» խորագրով երկրորդ ենթագլխում թանգարանը դիտարկված է որպես կրթության ճգնաժամը հաղթահարելու լավագույն միջոց: Կրթական գործընթացի կազմակերպման համար՝ որպես նոր մանկավարժական մոտեցում, առաջարկվում է «չոր» դասավանդման փոխարեն անցնել

առարկայական և զննողական միջոցների օգնությամբ կրթության կազմակերպմանը:

Հասարակական-քաղաքական գլոբալ փոփոխությունների արդի ժամանակաշրջանում ավելի ակնհայտ է դարձել թանգարանի՝ որպես սոցիալ-մշակութային համակարգի բաղկացուցիչ, կրթադաստիարակչական գործունեության դերը: Ելնելով այցելուների հետ կատարվող աշխատանքներից և թանգարանի հասարակական նշանակությունից, թանգարանի կրթադաստիարակչական գործունեության զարգացման ամբողջ ընթացքում, կատարվել է լուսավորական, քաղաքականացված, տեղեկատվական, հաղորդակցական հարացույցերի փոփոխություն:

Թանգարանը, ի տարբերություն դպրոցի, գրքի և քաղաքակրթական այլ նվաճումների, մարդուն տալիս է անձամբ վերապրելու հնարավորություն, ոչ միայն գիտելիքներ, այլև անձնական վերաբերմունք պատմության հանդեպ:

«Թանգարանային մանկավարժությունը որպես գիտական դիսցիպլին» խորագրով երրորդ ենթագլխում հիմնավորվում է թանգարանների կրթական գործունեության զարգացման շնորհիվ նոր գիտական դիսցիպլինի՝ թանգարանային մանկավարժության առաջացումը, որը գտնվում է թանգարանային գործի, մանկավարժության և հոգեբանության տիրույթում: Գիտական դիսցիպլին, որտեղ թանգարանը դիտարկվում է որպես կրթական համակարգի բաղկացուցիչ:

Թանգարանային մանկավարժությունը՝ որպես գիտության բնագավառ, ունի կատեգորիաների և հասկացությունների իր համակարգը, որոնք արտացոլում են թանգարանի կրթական գործունեության հիմնական բովանդակությունը և գտնվում են մանկավարժական գիտության հասկացությունների շրջանակում, զարգացնելով արդեն ծանոթ սահմանումները և ստեղծելով նորերը, դրանով իսկ ընդգծելով թանգարանային մանկավարժության առանձնահատկությունները:

Մեր կարծիքով թանգարանային մանկավարժության կրթական ծրագրերի բովանդակության մեջ որպես պարտադիր բաղադրիչ պետք է ներառել գեղագիտական, պատմագեղարվեստական, հումանիտար-միջառարկայական, տեղեկատվական տեխնոլոգիաների, սոցիալ-կողմնորոշման, թանգարանային հոգեթերապիայի մանկավարժական գործընթացները:

Ելնելով հետազոտության հիմնախնդրից բացահայտել ենք թանգարանային մանկավարժության առանձնահատկությունները, հասարակական

անհրաժեշտությունը, ինտերակտիվ փոխգործակցության հնարավորությունները շարունակական կրթության գործընթացում:

«Թանգարանների դասակարգումը և տիպաբանությունը ըստ կրթական գործունեության» խորագրով չորրորդ ենթազլխում ներկայացված են կրթական գործունեության երկու խումբ.

1. մասնագիտացված՝ պատմության, ազգագրության, երկրագիտության, գրականության, արվեստի, տեխնիկայի և այլ ոլորտների թանգարանները,
2. կրթական՝ ոչ մասնագիտական թանգարանները՝ մանկավարժական, այլ ուսումնական հաստատությունների և մանկական:

Բացահայտված և հիմնավորված է թանգարանային մանկավարժության կրթական գործունեության առանձնահատկությունը՝ այցելուն առարկայական միջավայրը և սոցիալական իրականությունը յուրացնում է առարկաների հետ անմիջական շփման և փոխազդեցության ճանապարհով: Այս մոտեցման հիմնաքար է հանդիսանում հոգեբան Ժ. Պիաժեի ինտելեկտի տեսությունը՝ համաձայն որի առարկայի մանիպուլյացիան համարվում է երեխայի ինտելեկտի ձևավորման հիմքը:

Թանգարանային մանկավարժության տեսանկյունից դիտարկված և հիմնավորված են իտալացի մանկավարժ Մարիա Մոնտեսորիի նախադպրոցական կրթության մեթոդիկան՝ համաձայն որի նախադպրոցական և դպրոցական տարրական դասարաններում շատ կարևոր է սենսորային դաստիարակությունը՝ երեխայի ակտիվությունը բացահայտող պայմանների ստեղծմամբ:

Համեմատական վերլուծության արդյունքում հաստատվել և հիմնավորվել է, որ գոյություն ունեցող թանգարանային մանկավարժության «ամերիկյան մոդելը» հիմնված է երեխաների զգայական զարգացման և գործունեության փորձի հարստացման գաղափարների վրա, իսկ «եվրոպական մոդելը», բացի ինտերակտիվությունից, կարևորում է նաև կոնկրետ պատմական իրականությունը և հատկապես նրա մշակութային ենթատեքստն ընկալելը: Թեև մանկական թանգարանների բաժանումը «ամերիկյան» և «եվրոպական» մոդելների, իհարկե մեծամասամբ պայմանական է: Ավելի շուտ, խոսքը գնում է թանգարանային-կրթական ինստիտուտի այն հնարավորությունների շրջանակի մասին, որոնք մեծապես ազդում են երեխայի զարգացման վրա:

Հետազոտական աշխատանքների շրջանակներում, ուսումնասիրելով, համադրելով և վերլուծելով երեխաների հետ աշխատանքի եվրոպական

(Գերմանիա- Բեռլին, Դրեզդեն, Լայպցիք, Էրֆուրտ – 1986թ., Բոնն, Քյոլն – 2010թ.), ռուսական (Ս.-Պետերբուրգ - 1986թ, Մոսկվա - 1986թ.) և ամերիկյան (Բոստոն – 2007թ.) փորձը, պետք է փաստենք, որ պրոֆիլային թանգարանների տարածքում գործող մանկական թանգարանի գործունեությունը պայմանավորված է որոշակի առանձնահատկություններով, որոնք էլ ապահովում են առաջադրված մանկավարժական խնդիրների, գործունեության սկզբունքների և աշխատաձևերի արդյունավետությունը:

«Թանգարանային կրթական ծրագրերի մեթոդիկան» խորոզիրը կրող երկրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

«Թանգարանային կրթական ծրագրերի նախագծում և մոդելավորում» առաջին ենթագլխում քննարկված և հիմնավորված է, թե ինչպես և ինչ չափանիշներով պետք է մշակել թանգարանային կրթական ծրագրի մոդելը և նախագիծ-ծրագիրը, կրթության արդիականացման հիմնախնդրի ժամանակակից մոտեցումների համատեքստում:

Նշվում է, որ Մեթոդական մշակումը հանդիսանում է թանգարանում կրթամշակութային գործընթացի նախապատրաստման եզրափակիչ փուլ, իսկ այցելուների հետ շփումը պետք է կառուցել հաշվի առնելով այդ գործընթացի մի շարք տեսական և գործնական հարցեր: Առաջին հերթին անհրաժեշտ է կազմել գործունեության մեթոդական կառուցվածքը, որը նախատեսում է՝ թեմայի, լսարանի, նպատակի, խնդիրների, սկզբունքների, աշխատաձևերի, աշխատավայրի, մեթոդների, հնարքների, միջոցների, աշխատանքի տևողության ընտրությունն ու հիմնավորումը, սպասվելիք արդյունքներն ու դրանց գնահատումը:

Հետազոտության շրջանակներում, մեր կողմից, տվյալ ալգորիթմով կազմված մոդելը փորձարկվել է Հայաստանի Հանրապետության մի շարք թանգարաններում, բացահայտելով գործընթացի օրինաչափությունները և հակասությունները: Հիմնավորվել է, որ շարունակական կրթության գործընթացի բարեփոխումների և թանգարանային կրթական ծրագրերի նպատակների վերաիմաստավորման արդի փուլում էական է համակարգային, շարունակական, և անձնակենտրոն մոտեցումները:

«Արդի թանգարանը որպես կրթամշակութային համալիր» երկրորդ ենթագլխում հիմնավորվում է թանգարաններում կազմակերպվող կրթամշակութային գործընթացը՝ որպես գործունեության առանձնահատուկ տեսակ, երբ նյութի ընկալման արդյունավետությունը իրականացվում է

թանգարանային առարկաներ հանդիսացող պատմական և մշակութային հուշարձանների միջոցով:

Հաստատվել է թանգարանային կրթական ծրագրերի առավելությունները՝ ուսուցման մեթոդիկաների հիմք է ծառայում բնօրինակը և ուսուցման գործընթացը տեղի է ունենում թանգարանի սրահներում, ինչն առավել բնական միջավայր է թանգարանային առարկան ամբողջովին ընկալելու համար, որտեղ շեշտը դրվում է տեսողական և գեղարվեստական ընկալման վրա: Ինչպես նաև կարճ ժամանակահատվածում հնարավոր է այցելուներին ծանոթացնել թանգարանի ցուցադրության հիմնական ու կարևորագույն հատվածներին: Այցելուների հետ աշխատելիս կիրառվում է թանգարանային առարկայի ընդհանուր կամ ծավալուն, համեմատական, համալիր, հատվածական վերլուծություն:

Հիմնավորվել է, որ թանգարանային կրթական ծրագրերը նպաստում են այցելուի գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացմանը, ուստի այդ գործընթացի մեթոդիկայի կատարելագործումը մեր հետազոտության շրջանակներում դիտարկվում է որպես ռազմավարական նշանակություն ունեցող խնդիր: Թանգարանային կրթական ծրագրի կարևոր առանձնահատկություններից է հանկարծաստեղծության (իմպրովիզացիայի) կիրառման լայն հնարավորությունը, իսկ բովանդակությունն ու անցկացման մեթոդաբանությունը պայմանավորված է այցելուների խմբի առանձնահատկություններով:

«Թանգարանային էքսկուրսավարի գործունեության մանկավարժական էությունը» երրորդ ենթազխում ներկայացված են շարունակական կրթության խնդիրները, որոնք առանց կրթական և մշակութային քաղաքականության չի կարող իրականացվել՝ անտեսելով զանգվածային հաղորդակցության միջոցները, մշակութային ինդուստրիան, գրադարանները, թանգարանները և այլն: Հիմնավորված է, որ շարունակական կրթությունը լիարժեք և արդյունավետ չի կարող լինել, առանց գործընթացում լրացուցիչ կրթական տարածք ներառելու:

Ներկայացված է թանգարանային կրթական ծրագրերում էքսկուրսավարի գործունեության բնութագիրը՝ մանկավարժական էությունն ու պահանջները: Ստուգված և հիմնավորված է, որ գործընթացի հաջողությունը իրապես պայմանավորված է էքսկուրսավարի անձով՝ խառնվածքից, ինչն արտահայտվում է վարքում, զգացողությունների, ապրումների արտահայտման ձևերում, համբերատարության, իր հույզերի, տրամադրության վերահսկման մեջ:

Վերը շարադրվածը էքսկուրսավարի վարպետության կարևորագույն բաղկացուցիչ մասերն են: Էքսկուրսավարը պետք է ծանոթ լինի հոգեբանության հիմունքներին, պատկերացնի անձի խառնվածքի առանձնահատկությունները և կարողանա ճիշտ օգտագործել դրանք:

Էքսկուրսավարի՝ որպես մանկավարժի, վարպետության մակարդակը պայմանավորված է ստեղծագործաբար կիրառված երկու խումբ գործոններից.

1. մեթոդական փաստաթղթերի մակարդակ, ցուցադրման օբյեկտների ընտրություն, երթուղու ընտրություն, «էքսկուրսավարի պայուսակի» բաղադրություն,

2. ընդհանուր պատրաստվածություն, թեմային տիրապետելը, խոսքի մշակույթը, խմբի հետ կապ հաստատելու կարողությունը, մասնագիտական հնարքների իմացությունն ու գիտելիքների մակարդակը:

«Տարիքային տարբեր խմբերի հետ կրթական ծրագրերի իրականացման առանձնահատկությունները» չորրորդ ենթագլխում բացահայտված և հաստատված են լսարանի հետ աշխատանքի յուրահատկությունները, թե ինչ չափով են թանգարանային մանկավարժի կողմից կիրառված գիտելիքներն ու հմտությունները համապատասխանում տվյալ լսարանի տարիքային առանձնահատկություններին:

Հիմնավորված է, որ թանգարանի կարևորագույն սոցիալական գործառույթներից է կրթությունն ու դաստիարակությունը, որի շարունակական իրականացումը թանգարանը վերածում է անփոխարինելի կրթամշակութային հաստատության: Մեր հետազոտության շրջանակներում հաստատված է, որ թանգարանը կարող է մեծապես նպաստել հարատև ուսումնառությանը, կրթության խնդիրների լուծմանը: Թանգարաններում կուտակված հսկայական կրթական ներուժը հնարավորություն է ստեղծում անձին սովորեցնելու, զարգացնելու, ավելի բարձր կրթական և դաստիարակչական մակարդակի հասցնելու:

Նշված է Եվրոպական հանձնաժողովի կողմից տարանջատված կրթության 3 տեսակները՝

- ֆորմալ (formal), կամ պաշտոնական ուսումնառություն,
- ոչ ֆորմալ (non formal) կամ ոչ պաշտոնական ուսումնառությունը,
- ինֆորմալ (informal), «քնական ուսումնառությունը»:

Իհարկե թանգարանները չեն հանդիսանում ֆորմալ կրթության օջախներ, բայց կարող են կազմակերպել և՛ ոչ ֆորմալ, և՛ ինֆորմալ կրթություն:

Թանգարանները ոչ պաշտոնական ուսումնառությունը խթանող իդեալական միջավայր են, քանի որ այստեղ կարող են կրթվել ոչ միայն երեխաները, այլև չափահաս կամ մեծահասակ այցելուները: Թանգարանային միջավայրը կարևոր դեր է խաղում այցելուների ինտելեկտուալ հետաքրքրությունները խթանելու, նրանց յուրօրինակ մշակութային և հուզական արժեքներով հարուստ փորձի մեջ ներգրավելու ուղղությամբ: Այս նպատակի իրագործումը թանգարանային մանկավարժության համար պետք է գերակա խնդիր համարվի:

Երրորդ՝ «Թանգարանային կրթական ծրագրերի իրականացումը որպես շարունակական գործընթաց» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

«Թանգարանային մարքեթինգը՝ արդյունավետ գործունեության նախապայման» առաջին ենթագլխում մեր կողմից մշակվել և փորձարարական աշխատանքներով հաստատվել է թանգարանային շուկայագիտության (մարքեթինգի) անհրաժեշտությունը, որը սերտորեն կապված է լսարանն ուսումնասիրելու, ընդլայնելու, այցելուների հետ կապերն ամրապնդելու, ինչպես նաև գործընթացի բազմաբնույթ ծրագրերի հետ: Բացահայտվել է, որ շուկայի հետազոտման գերխնդիրն այցելուի հոգեբանության ուսումնասիրումն է՝ այցելություններին նպաստող և խոչընդոտող հանգամանքները պարզաբանելու նպատակով: Նշվել է՝ արդյունքը լիարժեք կլինի, երբ պարզվի, թե ինչ է ակնկալում այցելուն թանգարանից և բոլոր հնարավոր միջոցները ներդրվեն նրա պահանջները բավարարելու համար:

Հետազոտական աշխատանքների շրջանակներում մշակվել և առաջարկվում է շուկայի ուսումնասիրության՝ այցելուների պահանջմունքների, ծառայությունների բազմազանության, այլ թանգարանների աշխատանքների հետ համեմատական վերլուծության, նորագույն տեխնոլոգիաների ներդրման, ֆինանսատնտեսական և նյութատեխնիկական բազայի հնարավորությունների բարելավմանն ուղղված վերլուծության համար մարքեթինգային ծրագրի հետևյալ փուլերը՝ շուկայի ուսումնասիրություն, ծառայության ուսումնասիրում, գնային քաղաքականություն, ծառայության առաջխաղացում, առաջարկվող ծառայության տրամադրում, արդյունավետության գնահատում:

Ավարտական փուլը մարքեթինգային ծրագրի իրականացումն է: Այս փուլում ծրագրի ղեկավարը պետք է վերահսկի աշխատանքների ընթացքը, համակարգի գործունեության ոլորտները, խստորեն հետևի սահմանված ժամանակացույցին և բյուջեի պահպանմանը, աշխատանքի որակին:

Ըստ մշակութային կյանքի վերաբերյալ բազմաթիվ միջազգային հետազոտությունների՝ թանգարան է այցելում չափահաս բնակչության 27-35%-ը: Հիմնավորված է, որ նպատակային խմբերի հետ աշխատանքի ճիշտ համակարգմանը նպաստում է PEST վերլուծությունը:

PEST (հայերեն հապավումը ՔՏՍՏ), այն է՝ Political - քաղաքական, Economic - տնտեսական, Social - սոցիալական, Technological - տեխնոլոգիական:

Ցանկալի է, որ թանգարանն ունենա առանձին ծրագրերի համար կազմված պլաններ՝ թիրախային խմբերի հետ աշխատանք, թանգարանային կրթական և ժամանցային ծրագրեր, որոնք պետք է փոխկապակցված լինեն և ընդգրկվեն ընդհանուր ծրագրի մեջ, ինչն ապահովելու համար կարևոր է նախապես իրականացնել վերլուծության երկրորդ եղանակը՝ SWOT վերլուծությունը, (հայերեն հապավումը ՈԻԹՀՎ), որտեղ՝ Strengths – ուժեղ կողմեր, Weaknesses – թույլ կողմեր, Opportunities – հնարավորություններ, Threats – վտանգներ:

«Միջազգային համագործակցությունը թանգարանային կրթական ծրագրերի իրականացման գործընթացում» երկրորդ ենթազխում ներկայացված և պատճառաբանված է Հայաստանի Հանրապետությունում թանգարանների գիտակրթական գործունեության ակտիվացման և թանգարանների դերի բարձրացմանը նպաստող մի շարք գործոններ ու իրադարձությունները, որոնք որակական և քանակական բազմաշերտ մակարդակ ապահովեցին գործընթացի համար՝

- Իս. Աբովյանի անվ. Հայական պետական մանկավարժական համալսարանի մշակույթի ֆակուլտետում բացվեց «Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն» բաժինը,
- թանգարանային մասնագետների նախաձեռնությամբ հիմնադրվեց «Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիա» ՀԿ-ն,
- Հայաստանն անդամագրվեց Թանգարանների համաշխարհային կոմիտեին՝ ստեղծվեց ԻԿՕՄ-ի Հայաստանի ազգային կոմիտե ՀԿ-ն,
- ՅՈՒՆԵՍԿՕ/ԻԿՕՄ-ի ազգային կոմիտեն կազմակերպեց դասընթաց-վարժանք, Երևանի և ՀՀ մարզերի թանգարանների աշխատակիցների համար,
- իրականացվեց «Hands-on կրթական ծրագրերը թանգարանում» թեմայով դասընթաց-վարժանք, ավարտին անցկացվեց սոցիոլոգիական հարցում, որի նպատակն էր ուսումնասիրել՝ թանգարանում իրականացվող

ծրագրերի տեսակները, հիմնականում ովքեր են վարում կրթական ծրագրերը, ովքեր են թանգարանային կրթական ծրագրերի թիրախային լսարանները, որոնք են կրթական ծրագրերի զարգացման հիմնական խոչընդոտները, ինչ է անհրաժեշտ կրթական գործունեությունը զարգացնելու համար:

- Եվրոպական միության «Ներդրումներ մարդկանց մեջ տեղական մշակույթի մատչելիություն, մշակութային բազմազանություն և զարգացում» ծրագրի շրջանակներում, Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի (dvv-international) համագործակցությամբ՝ իրականացվեց «Ակտիվացնենք թանգարանները՝ որպես հարատև կրթության տարածքներ» նախագիծը:
- ԻԿՕՄ-ի Կրթության և մշակութային գործունեության (ՍԵԿԱ) տարեկան գիտաժողովի անցկացումը Երևանում:
- «Հայաստանի թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիա» ՀԿ-ն կազմակերպեց վերապատրաստման դասընթացներ: Մենք՝ որպես փորձագետ, ինչպես նաև դասընթացավար, ղեկավարել ենք Հայաստանի տարբեր թանգարաններում իրականացված կրթական ծրագրեր:

Գերմանիայում մասնակցելով «Թանգարանները որպես շարունակական կրթության և միջմշակութային երկխոսության տարածք» թեմայով դասընթացին, որպես ուսուցանող իրականացրեցինք «Թանգարանի կառավարում» ՅՈՒՆԵՍԿՕ/ԻԿՕՄ-ի ազգային թրեյնինգ, «Թանգարանների էքսկուրսավարի դասընթաց», «Hands-on Կրթական ծրագրերը թանգարանում» դասընթացները:

Իրականացվել է «Hands-on Կրթական ծրագրերը թանգարանում» խորագրով ազգային դասընթաց-վարժանքը: Դասընթացը վարեցին միջազգային փորձագետներ՝ Հռոմ 3 Համալսարանի Փորձարարական մանկավարժության պրոֆեսոր, ԻԿՕՄ/ՍԵԿԱ միջազգային կոմիտեի նախագահ Էմմա Նարդին և Լուվրի Բարձրագույն դպրոցի պրոֆեսոր, Ֆրանսիայի Ազգային ժառանգության ինստիտուտի փորձագետ Մարի Կլարտե Օ' Նեյլը, որպես դասընթացավար մեր կողմից իրականացվեց.

1. «Թանգարանները և կրթությունը»
2. «Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ»
3. «Դրամահավաքը թանգարանում»

4. «Թանգարանների ընկերների ակումբ»
5. «Թանգարանները որպես միջմշակութային երկխոսության տարածքներ»
6. «Ներդրումներ մարդկանց մեջ՝ տեղական մշակույթի մատչելիություն»
7. «Թանգարանը որպես ոչ ֆորմալ կրթության տարածք»:

Մեր կողմից A-MUSE-ALL ծրագրի շրջանակներում իրականացրած կրթական ծրագրերը ներկայացվել են նաև տարածաշրջանային (Ստամբուլում) գործնական պարապմունքների ժամանակ:

- dvv international գերմանական կազմակերպության աջակցությամբ մեկնարկեց A-MUSE-ALL (Activate - Musems – As Lifelong Learning spaces - Ակտիվացնենք թանգարանները որպես ցկյանս ուսումնառության տարածքներ) ծրագիրը: Հայաստանում գործընկեր կազմակերպություններն էին «Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիա» և «Ազգային զարգացման գիտակրթական կենտրոն» ՀԿ-ները:
- Բռնում կազմակերպվեց տարածաշրջանային «Ուսուցանողի ուսուցանում» (TOT) դասընթացը, որի մասնակից էր նաև Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ: Արդյունքում կազմակերպվեց «Թանգարանները որպես կրթական տարածություն» սեմինար, գերմանացի միջազգային փորձագետ Կարմեն Բեքենբախի մասնակցությամբ:
- Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի՝ DVV International կազմակերպության ֆինանսավորմամբ Հայաստանում իրականացվեց «Պատանի արվեստաբան» կրթական դրամաշնորհային ծրագիրը:
- Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի՝ DVV International կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացվեց «Իմ քաղաքը» կրթական դրամաշնորհային ծրագիրը:
- Էլեկտրոնային ցուցադրություն սահմանափակ հնարավորություններով այցելուների համար Վանաձորի կերպարվեստի թանգարանում ԴՎՎ Ինթերնեյշնալ կազմակերպության Հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ և համագործակցությամբ:
- Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՍ) Հայաստանի ազգային կոմիտեի և Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի կողմից կազմակերպվեց «Հանրահոջակման գործընթացը բուհական և ակադեմիական թանգարաններում» խորագրով դասընթաց՝

համալսարանական, ակադեմիական և ինստիտուտ թանգարանների աշխատակիցների համար:

Դասընթացը վարում էին միջազգային փորձագետներ՝ Ստրասբուրգի համալսարանի փոխնախագահ, ԻԿՕՄ-ի Բուհական թանգարանների և հավաքածուների միջազգային կոմիտեի (ՅՈՒՄԱԿ) նախագահ՝ Հյուգ Դրեսսեն և Ֆինլանդիայի Տամպերե քաղաքի թանգարանների տնօրեն, ԻԿՕՄ-ի Մարքեթինգի և հանրահոշակման միջազգային կոմիտեի (ՄՓՌ) նախագահ՝ Մարյո Ռիտա Սալոնիեմին:

Երկարատև և նպատակային գործունեության արդյունքում Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության, ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտեի և «Dasaran» կրթական ծրագրի միջև կնքվեց եռակողմ համագործակցության հուշագիր: Այն նպատակաուղղված է դպրոց-թանգարան կապի ամրապնդմանը, աշակերտների շրջանում թանգարան հաճախելու մշակույթի ձևավորմանը, մշակութային արժեքների սերմանմանը, համակողմանիորեն զարգացած սերնդի կրթմանն ու դաստիարակությանը:

Ներկայացված ողջ գործընթացը հանդիսացել է մեր հետազոտության հիմնաքարն ու գործունեության փորձարարական բազան, որի շրջանակներում հաստատվել և հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, սահմանվել են նպատակը, օբյեկտը, առարկան, առաջադրվել են խնդիրները, գիտական վարկածը:

«ՀՊՄՀ պատմության թանգարանը որպես կրթամեթոդական կենտրոն և լրացուցիչ կրթական տարածք» երրորդ ենթագլխում ներկայացված է բարձրագույն ուսումնական հաստատությունների պատմությունը: Հիմնավորվում է ՀՊՄՀ պատմության թանգարանի՝ որպես կրթամեթոդական կենտրոնի նպատակը, շեշտելով նրա տեղն ու նշանակությունը Հայաստանի բուհական համակարգում և երկրի պետականության կայացման գործում: Ելնելով թանգարանի նպատակներից ստեղծվել է ակտիվ գործող կաբինետային համակարգ, որը հնարավորություն է ընձեռում թանգարանային մեթոդիկայի ներդրման արդյունքում բուհի բոլոր ֆակուլտետների ուսանողների ու դասախոսների համար ուսուցումը կազմակերպել այդ հավաքածուների հիման վրա, ինչպես նաև համապատասխան գիտական հետաքրքրություններ ունեցող մասնագետներին օգտվել թանգարանի ծառայություններից:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մանկավարժական համալսարանը հանրապետության և սփյուռքի համար մանկավարժական կադրեր պատրաստող առաջատար բուհն է, թանգարանի կրթամեթոդական կենտրոնի

գործունեությունում կարևորվում է ստեղծել հայկական մանկավարժության պատմության հարուստ ավանդույթները ներկայացնող ցուցադրություն: Թանգարանը որպես կրթամեթոդական կենտրոն իրականացնում է նաև բուհի թանգարանագետ կադրերի պատրաստման մասնագիտական բազային գործառույթներ և կազմակերպում է ուսանողների մասնագիտական պրակտիկան: Ելնելով թանգարանի գիտական զարգացման հայեցակարգից կազմակերպվել և իրականացվել է բազմաթիվ կրթական ծրագրեր տարբեր տարիքի այցելուների համար, որը բարձր է գնահատվել նաև արտասահմանյան գործընկերների՝ Լուվրի Բարձրագույն դպրոցի պրոֆեսոր, Ֆրանսիայի Ազգային ժառանգության ինստիտուտի փորձագետ Մարի Կլարտե Օ' Նեյ, Հռոմ 3 Համալսարանի Փորձարարական մանկավարժության պրոֆեսոր, ԻԿՕՄ/ՍԵԿԱ միջազգային կոմիտեի նախագահ Էմմա Նարդի, Ստրասբուրգի համալսարանի փոխնախագահ, ԻԿՕՄ-ի Բուհական թանգարանների և հավաքածուների միջազգային կոմիտեի (ՅՈՒՄԱԿ) նախագահ Հյուգ Դրեսսե, Բրիտանական թանգարանի կրթական ծրագրերի բաժնի վարիչ Էնն Սանդերս, ԱՄՆ Մարքեթինգի ասոցիացիայի նախագահ Շելի Ռեյզան, Գերմանացի թանգարանային փորձագետներ Բեատե Շմիդտ-Բեիլաու, Կարմեն Բեկենբախ, Մանֆրեդ Նավրոդ կողմից, ինչպես նաև Ռիո դե Ժանեյրոյում կայացած ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ) տարեկան վեհաժողովում, որտեղ ներկայացվեց ՀՊՄՀ պատմության թանգարանի գործունեությունը / տվյալները ներկայացված են Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի և Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ) Հայաստանի կոմիտեի հաշվետվություններում/:

Թանգարանը վերակառուցվելով, հնարավորություն ունեցավ վերածվելու լրացուցիչ կրթական տարածքի: Ընդունելով արտասահմանյան առաջավոր փորձը՝ նորագույն տեխնոլոգիաների օգտագործումը թանգարանային կրթական ծրագրերի մասսայականացման գործում, իրականացվել է աուդիոգիդ միջազգային ծրագիրը, որը թանգարանի ցուցադրությունն ու էքսկուրսիոն ծրագրերը հասանելի է դարձնում նաև վիրտուալ տիրույթում:

Որպես լրացուցիչ կրթական տարածք, թանգարանը մեծ տեղ է հատկացնում կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող այցելուների հետ տարվող աշխատանքներին: Այդ համատեքստում թանգարանը Հատուկ կրթության ֆակուլտետի հետ համատեղ, լեհական «Արի-Արի» կազմակերպության հետ կնքված պայմանագրի շրջանակներում համագործակցում է կույր և թույլ տեսող անձանց հիմնախնդիրներով զբաղվող հիմնադրամի հետ, որի նպատակն է՝ Լեհաստանում ձևավորված հարուստ փորձը փոխանցել

Հայաստանի համապատասխան հիմնախնդիրներով զբաղվող կառույցների մասնագետներին:

Թանգարանում տեղադրվել են բրայլյան տարբերակով տպագրված անոտացիոն տեքստեր, վահանակներ: Թանգարանում գործում է նաև աուդիոգիդը՝ հնարավորություն տալով տեսողության խնդիրներ ունեցող այցելուին ինքնուրույն շրջել թանգարանում՝ ունկնդրելով էքսկուրսիոն տեքստը: Անհրաժեշտ անվտանգության առումով մանկավարժական համալսարանի մուտքի աստիճանահարթակի առաջին և վերջին աստիճանների եզրերը գծանշվել են դեղին գույնով, ինչն էլ նպաստում է թույլ տեսողների ինքնուրույն տեղաշարժման գործընթացի դյուրացմանը:

Հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող այցելուների հետ տարվող աշխատանքների կարևորությունն ու առաջնահերթությունը, ինչպես նաև օգտվելով ծրագրի ընձեռած լայն հնարավորություններից, թանգարանի էքսկուրսիոն տեքստը հասանելի է նաև լսողության և խոսքի խանգարման խնդիրներ ունեցող անձանց համար՝ սուրդո տեքստերի միջոցով, որոնք համապատասխանաբար տեղադրված են ցուցանմուշի վիդեո բաժնում: Ծրագիրը կարևորվում է նաև տիֆլումանկավարժության տեսանկյունից, քանի որ էքսկուրսիոն տեքստը՝ աուդիո տարբերակով, թանգարանում առանց հատուկ միջոցների ու հարմարությունների ներդրման, հասանելի է դառնում նաև այս խմբի այցելուների համար:

Ելնելով կրթամեթոդական կենտրոնի գիտական հայեցակարգից, համագործակցելով «Միջբուհական կոնսորցիում» հիմնադրամի հետ, Ստեփանակերտում իրականացվեց «Թանգարանային կրթական ծրագրեր» վերապատրաստման դասընթաց: Նշված է նաև, որպես լրացուցիչ կրթական տարածք թանգարանը մասնակցել է Հայ առաքելական եկեղեցու Ախալքալաքի Սբ. Իսաչ եկեղեցու և «Աբուլ» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ Վրաստանի Ախալքալաք քաղաքում հայ համայնքի երեխաների համար կազմակերպված բակային ճամբարի աշխատանքներին:

Համագործակցելով հանրապետության և արտերկրի համալսարանական թանգարանների հետ, հետազոտության փորձարարական աշխատանքների շրջանակում համատեղ ծրագրեր է իրականացվել ԻԿՕՄ-ի համալսարանական և ակադեմիական թանգարանների կոմիտեի (ՅՈՒՄԱԿ) հետ, ինչպես նաև կազմակերպել է փորձի փոխանակում և խորհրդատվություն ՀՀ բուհական և ակադեմիական թանգարանների աշխատակիցների համար:

Թանգարանի կրթամեթոդական կենտրոնի ծրագրերը ընդգրկում են երկու բաժին՝ «Դպրոցը թանգարանի կրթական համակարգում» և «Թանգարանային մանկավարժությունը դպրոցում»: Այսպիսի մոդելը հնարավորություն է ընձեռում ավելի արդյունավետ կապ հաստատել դպրոցի և թանգարանի միջև, քանի որ նախադրյալներ են ստեղծվում դպրոցի կրթական գործունեությանը զուգընթաց ձևավորել և իրականացնել թանգարանային կրթական ծրագրեր, դպրոցի և թանգարանի համագործակցության նոր ձևերի որոնմամբ՝ ինչպես լրացուցիչ, այնպես էլ շարունակական կրթության շրջանակներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված բազմամյա գիտահետազոտական և մեթոդական աշխատանքների արդյունքում կրթական ծրագրերի իրականացման փորձաքննությունից ելնելով՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

- Սոցիալ-մշակութային գործունեության տեսությունն ու մեթոդիկան՝ որպես մանկավարժական առարկա ձևավորվել ու զարգացել է ընդհանուր մանկավարժության մեջ: Թանգարանային մանկավարժությունը՝ որպես մանկավարժական գիտության բաղկացուցիչ, իր մեթոդաբանությունը կառուցել է հասարակական, բնական և մանկավարժական գիտությունների նվաճումների հիման վրա՝ խնդիր ունենալով ձևավորելու համակողմանի զարգացած անձ՝ գեղագիտական, բարոյական արժեհամակարգով, իրավագիտական գիտելիքներով, տնտեսական և աշխատանքային գործունեություն ծավալելու ունակություններով:
- Թանգարանային մանկավարժության օբյեկտային բնագավառը բոլոր տարիքային, կրթական, սեռային, կրոնական, սոցիալական խմբերի կրթամշակութային գործընթացի մանկավարժական ղեկավարումն է՝ տարբեր կրթական ծրագրերի ու միջոցառումների պարտադիր բաղադրիչով:
- Հայաստանի Հանրապետությունում թանգարանները հիմնականում կարիք ունեն՝ կիրառելով լսարանի ուսումնասիրում-առաջարկ, ստեղծում-գնահատում սկզբունքը, բարելավել առանց ֆինանսների ներդրման կարևոր շղթան, ձևավորել թանգարանագետների և հարակից նեղ մասնագիտացում ունեցող մասնագետների ակտիվ համագործակցությունը:

- Թանգարանային կրթական ծրագրերի իրականացման արդի խնդիրներն են՝
 - այցելուի կողմից թանգարանային մշակույթի և հուշարձանի լեզվի յուրացումը,
 - այցելուի վիզուալ գրագիտության և մտածողության ձևավորումն ու զարգացումը,
 - դպրոցականների ընդգրկումը թանգարանի խմբակներում, ակումբներում:
- Թանգարանի կրթական գործունեությունը հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալ-քաղաքական և տնտեսական գործընթացների արտացոլումն է, իսկ զարգացումը պայմանավորված է նաև կրթության բնագավառում բարեփոխումների իրականացմամբ:
- Թանգարանային կրթական ծրագրերի իրականացման առանձնահատկությունները որոշվում են տվյալ թանգարանի՝
 - հավաքածուների պրոֆիլային ուղղվածությամբ,
 - մանկավարժական պայմանների և մշակութային միջավայրի առանձնահատկություններով և սոցիալ-մշակութային կյանքին ներգրավված լինելու աստիճանով,
 - կրթական ծրագրերի իրականացման գործում հիմնական ծառայությունների և կրթական հաստատությունների համագործակցության մակարդակով,
 - մասնագիտական կադրերի ապահովվածությամբ:
- Կրթական ծրագրերի իրականացումն ապահովվում է՝
 - երեխայի ստեղծագործական ունակությունների զարգացմանն ուղղված առկա պայմաններով և հնարավորություններով,
 - մանկական ստեղծագործության և «մեծերի» արվեստի համագործակցությամբ:
- Թանգարանային կրթական ծրագրի իրականացման պարտադիր սկզբունքներն են՝
 - դիտողականությունը,
 - ինտերակտիվությունը և թանգարանային տարածքի բազմագործառական լինելը,
 - միջավայրի հոգեբանական հարմարավետությունը և այդ տարածքում գործունեություն ծավալելու անվտանգությունը,

- երեխաների ստեղծարար գործունեության անհրաժեշտ պայմաններով ապահովումը,
- գործունեության արդյունքների վերլուծությունը և շնորհանդեսը:
- Թանգարանային կրթական ծրագրերի իրականացման բազա են հանդիսանում՝ ակումբները և խմբակները, ցուցահանդեսները, փառատոները, մրցույթները և տոնակատարությունները, գիտատեղեկատվական և մեթոդական նյութերի հրատարակումը, մանկական ստեղծագործության ֆոնդը:

Այսպիսով, մշակված և Հայաստանի թանգարաններում իրականացված կրթական ծրագրերի արդի մոդելը գործնականում փոխեց թանգարանի կրթական գործունեության մասին նախկին պատկերացումները, ինչպես թանգարանային աշխատողների, այնպես էլ հանրության մոտ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Գրիգորյան Ա.Ֆ., Թանգարանի և դպրոցի համագործակցության դերը դպրոցականների պատմական գիտակցության ձևավորման հարցում, // Խ.Աբովյանի ծննդյան 200-ամյակին նվիրված Պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, նոյեմբեր 19-21, 2009թ. Ե., Մանկավարժ, 2010, էջ 10-12, 286 էջ:
2. Գրիգորյան Ա.Ֆ., Գրքի դերը ժամանակակից կրթության և դաստիարակության գործում: // Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցության համակարգում: Հանրապետական գիտաժողովի նյութեր, Ե., Լուսաբաց հրատ., 2010, էջ 107-110:
3. Գրիգորյան Ա.Ֆ., Թանգարանային մասնագետների վերապատրաստման հարցի շուրջ: // «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N2, Ե., Էդիթ Պրինտ, 2010, էջ 110-115:
4. Գրիգորյան Ա.Ֆ., Թանգարանային էքսկուրսիա: // «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N3, Ե., Էդիթ Պրինտ, 2011, էջ 247-256:
5. Գրիգորյան Ա.Ֆ., Թանգարանների հարմարեցումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այցելուների համար: // Հատուկ կրթության հիմնախնդիրներ: Գիտամեթոդական հանդես: Ե., 2015, էջ 30 -35:

6. Պիկիչյան Հ., Հարոյան Մ., Գրիգորյան Ա., Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ /ուսումնական ձեռնարկ/ Ե., Էդիթ Պրինտ, 2007, 196 էջ:
7. Պիկիչյան Հ., Հարոյան Մ., Գրիգորյան Ա., Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ: Դասընթացի ծրագիր Ե., Էդիթ Պրինտ, 2007, 36 էջ:
8. Հարոյան Մ., Ավագյան Ա., Գրիգորյան Ա., Գիտակրթական գործունեության ընթացքը Հայաստանի թանգարաններում «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N4, Ե., Էդիթ Պրինտ, 2012, էջ 18-28:
9. Григорян А.Ф., Роль русско-армянских взаимоотношений в формировании музейно-образовательных традиций в Армении, „Диалог культур“, Армения и мировая культура: сборник научных статей, Гюмри, изд-во „Импоритм“, 2008, с. 170-176.
10. Григорян А.Ф., Музей как образовательная среда. // „Музей“ научно-теоретический и методический журнал, Е., „Эдит принт“ 2009, N 1, с. 148-156.
11. Григорян А.Ф., Международные тренинги как эффективное средство подготовки музейных работников, „Диалог культур“, Армения и мировая культура: сборник научных статей, Гюмри, изд-во „Импоритм“, 2011, с. 190-196.
12. Григорян А.Ф., Проблемы подготовки музейных кадров, „Музей“ N11, М., изд. „Фактограф“, 2014, с. 72

Григорян Алвард Филипповна

**ПРОБЛЕМА РЕАЛИЗАЦИИ МУЗЕЙНЫХ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ ПРОГРАММ
(НА ПРИМЕРЕ МУЗЕЕВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02. «Методика преподавания и воспитания».

Защита диссертации состоится 28-ого апреля 2016г. в 12:00 на заседании специализированного совета по педагогике 020 ВАК при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Реформы в системе образования Республики Армения на настоящем этапе направлены на интеграцию в интернационализацию образования в целях повышения эффективности и обеспечения качества обучения, где свое особое место занимает музейная педагогика, обеспечивающая образовательный процесс без пространственных и временных ограничений. К сожалению, следует отметить, что эти возможности реализуются не полностью.

Наши предварительные исследования показали необходимость разработки научных основ музейной педагогики для реализации образовательных и культурных программ в наших музеях, использование новых подходов в работе с различными слоями населения, особенно школьниками, студентами, молодежью, посетителями с особыми образовательными потребностями, и другими социальными целевыми группами, что ранее осуществлялось без наличия соответствующих оснований.

Актуальность исследования обусловлена совершенствованием возможностей соответствия научно-практических основ музейной педагогики и образовательных программ предъявляемым современным требованиям, что возможно посредством анализа закономерностей развития и обоснования в области практических исследований.

Цель исследования. Разработка научно-практической основы системы музейной педагогики на современном этапе и ее практическая реализация на региональном уровне на примере музеев Республики Армения.

Задачи исследования:

- Выявить современные тенденции в области совершенствования и развития образовательно-воспитательной системы музея.

- Установить и обосновать степень применимости концептуальных подходов музейной педагогики в современных условиях в Республике Армения.
- Определить возможности применения и эффективность отдельных направлений и моделей музейной педагогики в образовательно-воспитательном процессе.
- Выявить особенности эстетического, творческого, этического, патриотического, гражданского комплексного подхода образовательного процесса.
- Разработать принципы, особенности управления и условия реализации музейных образовательных программ.

Научная новизна исследования.

- В области музейной педагогики в Республике Армения впервые разработаны научные основы проектирования и создания образовательных программ музея, в которых определены структура и функции процесса управления, задачи и методы, принципы оценки результата для каждого этапа.
- Разработаны основные положения региональной музейной педагогики, в частности:
 - методологических основ и принципов музейных образовательных программ,
 - установление влияния средств и методов сформированной за рубежом музейной педагогики на культурно-образовательную деятельность музеев Республики Армения с учетом изменений, происходящих в социально-культурной среде.
- Выявлены сущность и характеристики музейной педагогики как целостного процесса в соответствии с современными тенденциями культурно-образовательной деятельности в контексте диалога культур.

Теоретическое значение исследования.

- Теоретически обоснованы и опытным путем опробированы научные и методологические основы управления музейной педагогики как системы.
- Разработаны основы управления и технологическое обеспечение этого процесса, которые отражены в авторских программах, монографиях и статьях диссертанта, посвященных музейной педагогике.
- Определены и обоснованы доступность, а также целесообразность и необходимость осуществления образовательных программ для всех возрастных групп.

Практическое значение исследования.

Работа имеет научно-педагогическое практическое значение для организации культурно-просветительской деятельности в музейной среде. Созданы (в соавторстве) учебные пособия "Музейный менеджмент и маркетинг", "Образование в

музее", " Основы экскурсоведения», разработаны учебные программы для высшего специального образования.

Результаты исследования могут быть использованы при создании учебников и монографий, а также реализации образовательных музейно- педагогических программ в других регионах.

Структура и объем работы. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка литературы и приложения. Общий объем диссертации составляет 165 компьютерных страниц.

ALVARD F. GRIGORYAN

**MAJOR ISSUES OF IMPLEMENTATION OF MUSEUM EDUCATION
PROGRAMMES
(Case study of the Museums of Armenia)**

Thesis submitted for claiming the Degree of Candidate of Pedagogical Sciences,
Specialty Field: 13.00.02 – “Teaching and Education Methodology”

The defence will take place on April 28, 2016 at 12:00 at Higher Attestation Commission’s
020 Degree-awarding Scientific Council’s session,
Khachatur Abovian Armenian State Pedagogical University
(Address: Tigran Mets 17, 0010 Yerevan)

SUMMARY

Relevance of the research. The on-going reforms in the educational system of the Republic of Armenia are aimed at integrating the international education area, to ensure the quality and enhance the effectiveness of education – highlighting, thus, the place and role of museums in this endeavour – primarily getting beyond the space and time limitations of in-class activities. Unfortunately, we cannot but state that the opportunities provided are not amply benefited.

Our preliminary studies have evidenced the necessity to develop the scientific and practical fundamentals of museum pedagogy, the new approaches to the implementation of educational and cultural programs targeting different social sectors, especially, schoolchildren, students, children with special educational needs, as well as other target groups – a sphere that, in the past, proved to lack pertinent bases.

The relevance of the study stems from the most up-to-date requirements to adjust the scientific and applied bases of Museum Pedagogy to the respective degree programmes with corresponding enhancement of the appropriate opportunities and pre-settings which is feasible merely through the analyses of the field development regularities and valid practical researches.

The study is aimed at the development of scientific bases – relevant for the current period of the development of Museum Pedagogy – and at the respective practical implementation in the museums of the Republic of Armenia.

The objectives set forth in the research are:

- To carry out a scientific-theoretical analysis of the current trends of enhancement and development of the educational-instructive system of museums;
- To identify and ground the degree of applicability of the conceptual approaches of Museum Pedagogy under contemporary conditions in the Republic of Armenia;

- To determine the possibilities and effectiveness of certain areas of professional activities and models in the educational-instructive processes of Museum Pedagogy;
- To identify the peculiarities of aesthetic and creative, ethical, patriotic, civic, national consciences-based educational-instructive approach in the integrated approach;
- To identify and develop the structural principles, managerial peculiarities and conditions of the implementation of museum education programmes in line with the requirements of transition period.

The scientific novelty of the research.

- For the first time in the Republic of Armenia, in the field of Museum Pedagogy, the scientific and theoretical fundamentals of the design and final development of Museum Educational programmes have been developed – with special reference to the structure, the set of management, the issues to be tackled and methods to be applied for every phase, as well as the final evaluation principles.
- Pertinent theoretical and methodological provisions and generalizations have been developed regarding the fundamentals and structural principles of Museum Education programmes. The impact of the foreign means and methods of Museum Pedagogy on the cultural and educational activities of museums in the Republic of Armenia has also been analysed.
- The contemporary requirements of Museum Education programmes have been developed on the bases of the analysis of current changes proceeding in the system of socio-cultural activities.
- Museum Pedagogy characteristics, as a holistic process, have been revealed in accordance with the modern trends in educational and cultural activities.

The theoretical input of the research.

- The scientific-theoretical and methodological bases of management of Museum Pedagogy – as a system – have been theoretically grounded and empirically supported.
- The technological provisions of Museum Pedagogy have been developed and respectively involved in the educational programmes, monographs, articles on Museum Pedagogy authored by the Researcher.
- The accessibility, convenience and necessity of promotion of the respective educational programmes of Museum Pedagogy for all the possible age groups have been revealed and grounded.

The practical input of the research.

The research has practical scientific-pedagogical importance for organizing cultural and educational activities in museum-based contexts. As a result of the investigation, the Researcher has co-authored “Museum Management and Marketing”, “Education in Museums”, “Basics of Guided Tours (Excursions)”, educational manuals as well as professional higher-education curricula and course descriptions.

The study results might be applied in creating textbooks and monographs, as well as in wider contexts of educational programs within Museum Pedagogy field work in other regions.

The structure and volume of the research.

The dissertation consists of an Introduction, three Chapters, Conclusions, List of references and Appendix. The total volume of the thesis submitted: 165 computer pages.